Հավելված 2
ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի
2012թ. մարտի 16-ի նիստի N 4-Ա որոշման

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 5

Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիր 5

Ընդհանուր դրույթներ 5

Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները 8

Բաժին Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք .. 9

Բաժին 2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ 11

Բաժին 3.Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ 12

Բաժին 4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա արժեթղթերը և այլ ներդրումները պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ 12

Բաժին 5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնված կամ բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունը պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ 14

Բաժին 6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված՝ սույն աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը) 14

Բաժին 7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա դրամական միջոցները՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ 16

Բաժին 8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները 17

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 21

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ 23

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՊԱՇՏՈՆ ՋԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿ 23

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 24

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 26

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ 26

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 27

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագիր

Ընդհանուր դրույթներ

1. Սույն ուղեցույցը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը:

2. Հայտարարագրի ներկայացման պարտականությունը բխում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածների պահանջներից:

3. Հայտարարագիրը ներկայացնում են 2012թ. հունվարի 1-ից հետո պաշտոնեական պարտականությունները ստանձնած կամ դադարեցրած՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված հետևյալ բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ Հանրապետության Նախագահը, վարչապետը, Ազգային ժողովի պատգամավորները, սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, նախարարները և նրանց տեղակալները, գլխավոր դատախազը և նրա տեղակալները, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազները, օրենքներով ստեղծված պետական մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները և այդ մարմինների անդամները, կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալը և կենտրոնական բանկի խորհրդի անդամները, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, նրանց տեղակալները, վերահսկիչ պալատի նախագահը, նրա տեղակալը, խորհրդի անդամները, Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը, կառավարության աշխատակազմի ղեկավարը և նրա տեղակալները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամները, Երևանի քաղաքապետը և նրա տեղակալները, մարզպետները և նրանց տեղակալները, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների

ղեկավարները, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Հանրապետության Նախագահի խորհրդականները և օգնականները, Ազգային ժողովի նախագահի խորհրդականները և օգնականները, վարչապետի խորհրդականները և օգնականները, նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50,000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները, ինչպես նաև Հանրապետության Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարը:

4. Այն բարձրաստիճան պաշտոնատար անձինք, որոնց պաշտոնեական պարտականությունները դադարեցվել են 2012թ. հունվարի 1-ից հետո և նրանք նույն օրը ստանձնել են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձանց պաշտոն, ապա սույն հայտարարագիրը լրացվում է մեկ անգամ՝ այդ օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում:

5. Հայտարարագիրը լրացվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշման (2012թ. փետրվարի 23-ին թիվ 205-Ն որոշմամբ կատարված փոփոխություններով և լրացումներով) հավելված N 2-ով հաստատված ձևաթղթի:

6. Հայտարարագիրը լրացնելիս անհրաժեշտ է օգտվել բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի լրացման սույն ուղեցույցից:

7. Հայտարարագրի լրացման ուղեցույցը և ձևաթղթերը հասանելի կլինեն բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի www.ethics.am, ՀՀ կառավարության աշխատակազմի www.gov.am, ՀՀ Ազգային ժողովի www.parliament.am, ՀՀ սահմանադրական դատարանի www.concourt.am, ՀՀ դատական դեպարտամենտի www.court.am, ՀՀ դատախազության www.genproc.am, էլեկտրոնային կայքէջերում:

8. Հայտարարագրի յուրաքանչյուր աղյուսակ լրացվում է սույն ուղեցույցի համապատասխան բաժնով սահմանված կարգով:

9. Հայտարարագիրը լրացվում է ինչպես էլեկտրոնային եղանակով, այնպես էլ ձեռագիր:

10. Հայտարարագիրը էլեկտրոնային եղանակով լրացվում է հայերեն լեզվով (բացառությամբ ուղեցույցով սահմանված դեպքերի), «GHEA Grapalat» տառատեսակով, 12 տառաչափով:

11. Հայտարարագիրը էլեկտրոնային եղանակով լրացնելիս հայտարարագրի որևէ բաժնում նախատեսված աղյուսակի տողերի քանակը չբավականացնելու դեպքում հայտարարագրման ենթակա տեղեկությունների լրացման համար աղյուսակում ավելացվում է համապատասխան ձևաչափի նոր տող:

12. Հայտարարագիրը ձեռագիր լրացվում է կապույտ կամ սև գույնի գնդիկավոր գրիչով, ընթեռնելի ձեռագրով: Եթե Հայտարարագրի նախատեսված բաժնի աղյուսակային ձևերի համապատասխան տողերը չեն բավականացնում հայտարարագրման ենթակա տվյալները լրացնելու համար, ապա դրան կցվում են համապատասխան աղյուսակները պարունակող լրացուցիչ էջեր:

13. Էլեկտրոնային եղանակով լրացվող Հայտարարագրի աղյուսակների չլրացված վանդակներում դրվում է « - » նշանը: Ձեռագիր լրացման դեպքում Հայտարարագրի աղյուսակների չլրացված վանդակներում դրվում է « - » նշանը, իսկ չլրացված սյունակներում՝ **« Z »** նշանը:

14. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի ձևը ենթակա չէ փոփոխման:

15. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի վերնագրում հայտարարատուն ընդգծում է «ստանձնել» կամ «դադարեցնելու» բառերը:

16. Հայտարարագրի յուրաքանչյուր լրացված էջի տողատակում, դրա համար առանձնացված մասում, դրվում է հայտարարատուի ստորագրությունը:

17. Լրացված Հայտարարագիրը ուղարկվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով (այսուհետ՝ Էթիկայի հանձնաժողով)՝ սույն ուղեցույցով սահմանված հայտարարագրի ներկայացման կարգի պահանջներին համաձայն:

Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները

18. Հայտարարագրի «**Բարձրաստիճան պաշտոնատար անձի տվյալները**» աղյուսակի՝

- «**Հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը**» տողում լրացվում են հայտարարատուի ազգանունը, անունը, հայրանունը՝ ըստ անձնագրի:
- «**Զբաղեցրած պաշտոնը**» տողում լրացվում է համապատասխան իրավական ակտով սահմանված պաշտոնի ամբողջական անվանումը՝ ներառելով պետական մարմինի անվանումը:
- «**Պաշտոնը ստանձնելու (դադարեցնելու) ամսաթիվը**» տողում նշվում է այն ամսաթիվը, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձը ստանձնել կամ դադարեցրել է իր պաշտոնեական պարտականությունները:
- «**Անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված**» տողում լրացվում են հայտարարատուի անձնագրի պահանջվող տվյալները:
- «**Հաշվառման հասցեն**» տողում լրացվում է հայտարարատուի հաշվառման հասցեն ըստ անձնագրում կատարված համապատասխան գրառման:
- «**Բնակության հասցեն**» տողում լրացվում է հայտարարատուի հիմնական բնակության հասցեն, եթե այն տարբերվում է հաշվառման հասցեից:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, մարզը, նահանգը կամ այլ վարչատարածքային միավորը, քաղաքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փոստային ինդեքսը, փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- «**Հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն**» տողում լրացվում են հայտարարատուի այն հեռախոսների կոդերը և համարները, (աշխատանքային, ծառայողական), ինչպես նաև էլ-փոստի հասցեն, որոնցով հնարավոր է կապ հաստատել հայտարարատուի հետ:
- «**Հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը, տարեթիվը**» տողում թվերով նշվում են հայտարարագրի ներկայացման օրը, ամիսը և տարեթիվը:
- «**Հայտարարագիրը բաղկացած է էջից**» տողում թվերով նշվում է հայտարարագրի լրացված էջերի քանակը:

Բաժին Ա. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք

19. Հայտարարագրի այս բաժնում լրացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տվյալները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակը ներառում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված, բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող փոխկապակցված անձանց:

20. **«Ա1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակները»** աղյուսակի՝

- «**Ազգանունը, անունը, հայրանունը**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի ազգանունը, անունը, հայրանունը:
- «**Ծննդյան տարեթիվը**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը:

21. **«Ա2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք»** աղյուսակը լրացվում է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը տրված է Աղյուսակ 1-ում: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում **տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնները**: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ցանկը սահմանվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակով:

22. **«Ա2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող՝ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձինք»** աղյուսակի՝

- «**Զբաղեցրած պաշտոնը**» սյունակի վանդակներում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող ազգակցի պաշտոնի անվանումը, որը համապատասխանում է Աղյուսակ 1-ում նշված պաշտոնյաների համար սահմանված ցանկին:
- **Փոխկապակցված անձի զբաղեցրած պաշտոնի անվանման մեջ** անհրաժեշտ է նշել պետական մարմնի անվանումը, ինչպես նաև պետական մարմնի այն կառուցվածքային ստորաբաժանումը, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:
- **Նախարարների և նրանց տեղակալների համար** «**նախարարության համակարգի պաշտոնները**» ներառում են նախարարի, նախարարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, նախարարության աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները:
- **Օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմնի կողմից կարգավորվող ոլորտում գործող առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոններ** են համարվում առևտրային կազմակերպության գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև առևտրային կազմակերպության խորհրդի անդամների պաշտոնները:
- **«Ազգակցական կապը»** սյունակում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ ունեցած ազգակցական կապը: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու **արյունակցական կապի 1-ին աստիճանի փոխկապակցված անձինք են՝ զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները**: Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու հետ **արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի** մեջ գտնվող փոխկապակցված անձինք են **բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու թոռները, հորեղբայրները, հորաքույրերը, մորաքույրերը, մորեղբայրները, քրոջ զավակները, եղբոր զավակները**:
- «**Ազգանունը, անունը, հայրանունը**» սյունակում համապատասխանաբար նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի ազգակցի ազգանունը, անունը և հայրանունը:

- Եթե բարձրաստիճան պաշտոնատար անձը կորցրել է կապը որևէ փոխկապակցված անձի հետ և տեղեկատվության բացակայության պատճառով ի վիճակի չէ հայտարարագրելու նրանց որպես փոխկապակցված անձ, ապա նա հայտարարագրի սույն աղյուսակի «**Ազգակցական կապը**» և «**Ազգանունը, անունը, հայրանունը**» սյունակներում նշում է փոխկապակցված անձի ազգակցական կապը և անձի անունը, հայրանունը, ազգանունը՝ դատարկ թողնելով «**Զբաղեցրած պաշտոնը**» սյունակի համապատասխան վանդակը:

Բաժին 2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

23. Հայտարարագրի «**2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ**» բաժնում ներկայացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում սեփականության իրավունքով պատկանող առկա գույքի վերաբերյալ տվյալներ:

24. Հայտարարագրի «**2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ**» աղյուսակի՝

- «**Անշարժ գույքի տեսակը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը՝ հողամասը, ընդերքի մասը, մեկուսի ջրային օբյեկտը, անտառը, բազմամյա տնկին, շենքը, շինությունը, հողին ամրակայված այլ գույքը՝ համաձայն կից Աղյուսակ 2-ի:

  Անշարժ գույքի յուրաքանչյուր տեսակի համար, լրացվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով սահմանված գույքային միավորը:

  Ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության իրավունքով պատկանող գույք ունենալու դեպքում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը «**Անշարժ գույքի տեսակը**» սյունակի համապատասխան տողում փակագծերում նշում է նաև «համատեղ սեփականություն» կամ «բաժնային սեփականություն» բառերը:

- «**Գտնվելու վայրի հասցեն**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարագրման ենթակա անշարժ գույքի լրիվ հասցեն:

  Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականում նշված հասցեն:

Բաժին 3.Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

25. Հայտարարագրի **«3.Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** աղյուսակի՝

- «**Շարժական գույքի տեսակը**» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի տեսակը՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, անիվավոր, թրթուրավոր, ինքնագնաց մեքենան կամ մեխանիզմը, օդային, ջրային փոխադրամիջոցը՝ համաձայն կից Աղյուսակ 3-ի:

  Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների շարքին են դասվում այն տրանսպորտային միջոցները, որոնց շարժիչների աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, ինչպես նաև տարբեր բեռնատարողությամբ կցորդները կամ կիսակցորդները:

- «**Սերիան, մակնիշը**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է հայտարարագրման ենթակա շարժական գույքի սերիան և մակնիշը, այդ թվում՝ թողարկման տարեթիվը: Մակնիշը և սերիան լրացվում է շարժական գույքի տեխնիկական փաստաթղթերում արտացոլված լեզվով:

Բաժին 4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա արժեթղթերը և այլ ներդրումները պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

26. Հայտարարագրի **«4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա արժեթղթերը և այլ ներդրումները պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** աղյուսակի՝

- «**Արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը**» սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող արժեթղթի տեսակը (պարտատոմսը, չեկը, մուրհակը, բաժնետոմսը և Հայաստանի Հանրապետության օրենքներով արժեթղթերի թվին դասվող այլ փաստաթուղթը, բացառությամբ բանկային վկայագրի) և (կամ) այլ ներդրումը հավաստող փաստաթուղթը (բաժնեմասը, փայաբաժինը)՝ համաձայն կից Աղյուսակ 4-ի:

  Սյունակի յուրաքանչյուր տողում փակագծերում նշվում է նաև համապատասխան արժեթուղթը թողարկողի անվանումը կամ ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև արժեթղթի ծածկագիրը (առկայության դեպքում): Օտարերկրյա արժեթղթերի դեպքում ավելացվում է նաև «օտարերկրյա» բառը:

- «**Արժեքը (գինը)**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.

- **Բաժնային արժեթղթերի դեպքում՝** եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրին (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել նախորդող 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:

- **Պարտքային արժեթղթերի դեպքում՝** պարտքային արժեթղթերի մնացորդային գումարը:

- **Վճարային արժեթղթերի դեպքում՝** նշվում է տվյալ վճարային արժեթղթի մնացորդային գումարը (առկայության դեպքում):

- «**Արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:

Բաժին 5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնված կամ բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունը պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

27. Հայտարարագրում **«Հանձնված կամ վերադարձված փոխառություն»** է համարվում հայտարարատուի կողմից այլ սուբյեկտի սեփականությանը դրամի (փոխառության գումարի) կամ այլ գույքի հանձնումը՝ միևնույն գումարի դրամ կամ ստացված գույքին հավասար քանակի և նույն տեսակի ու որակի գույք վերադարձնելու պայմանով:

28. Հայտարարագրի **«Բ5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնված կամ Բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունը պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** աղյուսակի՝

- «**Պարտապանի անվանումը կամ ազգանունը, անունը և հայրանունը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանի անվանումը՝ եթե այն իրավաբանական անձ է կամ ազգանունը, անունը և հայրանունը՝ եթե պարտապանը ֆիզիկական անձ է:
- «**Պարտապանի հասցեն**» սյունակի համապատասխան տողում լրացվում է հայտարարատուի կողմից փոխառություն ստացած կամ վերադարձրած պարտապանների հասցեն՝ իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ բնակության վայրի հասցեն:

  Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- «**Արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Գումարը (չափը)»** սյունակի յուրաքանչյուր տողում լրացվում է հայտարարատուի առկա փոխառությունների գումարի չափը:

Բաժին 6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ

դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված՝ սույն աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)

29.Հայտարարագրի **«6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ձեռք բերված և օտարված՝ սույն աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)»** աղյուսակի՝

- «**Գույքի անվանումը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձին սեփականության իրավունքով պատկանող, հայտարարագրի 2-5-րդ կետերում չնշված 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած այն գույքի համառոտ հատկանիշները, որն օտարվել կամ ձեռք է բերվել բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը:
- **«Համառոտ հատկանիշները»** սյունակի համապատասխան տողերում նշվում է թանկարժեք գույքի հիմնական բնութագրիչները:
- «**Ձեռք է բերվել**» սյունակի «**գինը (արժեքը)**» հատվածի համապատասխան տողում նշվում է տվյալ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու

օրը ձեռք բերված յուրաքանչյուր միավոր թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի ձեռքբերման պայմանագրում արտացոլված գնի:

- «**արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «**Օտարվել է**» սյունակի **«գինը (արժեքը)»** հատվածի համապատասխան տողում նշվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը օտարված թանկարժեք գույքի արժեքը՝ ըստ թանկարժեք գույքի օտարման պայմանագրում արտացոլված գնի:
- «**Առկա է պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ**» սյունակի համապատասխան տողում դրվում է **«Վ»** նշանը, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա ընթացքում տվյալ թանկարժեք գույքը ձեռք է բերվել և չի օտարվել:

Բաժին 7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա դրամական միջոցները՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ

30.Հայտարարագրի **«7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա դրամական միջոցները՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** աղյուսակի՝

- «**Դրամական միջոցի արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- **«Դրամական միջոցների չափը (գումարը)»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է նշված արժույթով առկա դրամական միջոցի (այդ թվում բանկում ունեցած) մեծությունը:

Բաժին 8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները

31. Հայտարարագրի **«8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները»** բաժնում ներկայացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում ստացած՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված եկամուտների տեսակները և դրանց ստացման աղբյուրները:

32. Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գույքի օտարումից կամ օգտագործումից ստացված ամբողջ եկամտից՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը հայտարարագրում արտացոլում է պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը իր կողմից փաստացի ստացած մասը:

- «**Եկամտի տեսակը**» սյունակի համապատասխան տողում լրացվում են բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը Հայաստանի Հանրապետության դրամով,

արտարժույթով և (կամ) բնամթերային (ոչ դրամական ձևով) վճարված համապատասխան եկամտի տեսակները՝ համաձայն Աղյուսակ 5-ի:

- «**Եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարող կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը և հայրանունը:
- «**Եկամուտ վճարողի հասցեն**» սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարող կազմակերպության գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի բնակության վայրի լրիվ հասցեն:
- Հասցեն լրացնելիս անհրաժեշտ է նշել երկիրը, մարզը, նահանգը (այլ վարչատարածքային միավորը), քաղաքը (գյուղը կամ այլ բնակավայրը), փողոցը, տունը, շենքը և բնակարանը:
- «**Արժույթը**» սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի անվանումը:
- «**Եկամուտների չափը**» սյունակի համապատասխան տողում լրացվում է եկամուտ վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի առձեռն կամ նրա հաշվին փոխանցված գումարի մեծությունը: Օրենքով սահմանված դեպքերում, հարկերը կամ պարտադիր վճարները եկամուտ վճարողի կողմից պահված լինելու դեպքում՝ նշվող գումարի չափը չի ներառում պահված հարկերը և պարտադիր վճարները: Այն դեպքում, երբ եկամուտ վճարողը հարկի կամ պարտադիր վճարի պահում չի կատարել՝ սյունակի համապատասխան տողում նշվում է ստացած ամբողջ գումարը:
- **«ՀՀ դրամով»** սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը վճարված եկամտի գումարը՝ ՀՀ դրամով:
- «**արտարժույթով**» սյունակի համապատասխան տողում լրացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը վճարված եկամտի գումարը՝ համապատասխան արտարժույթով:

- «**բնամթերքով**» սյունակի համապատասխան տողերում լրացվում է նվիրատվության կամ ժառանգության կարգով, ինչպես նաև վիճակախաղերի իրային շահումների (մրցանակների) տեսքով ստացված բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի չափը՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ, որը արտացոլվում է ՀՀ դրամով՝ բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի հաշվարկման ներքոշարադրյալ մեթոդներով:
- Բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամուտը կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում դրանք արտացոլվում են կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից եկամտի վճարման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսում (անհնարինության դեպքում նախորդող ամսում) **այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով**, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով:
- Բնամթերային եկամուտը այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում դրանք հաշվի է առնվում և արտացոլվում է նույնանման գործարքների համար եկամտի ստացման կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարման ամսվա **հրապարակված վիճակագրական գներով** (անհնարինության դեպքում նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներ), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար եկամտի ստացմանը կամ նշված եկամտի պահանջի իրավունքի մարմանը նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գները (սակագները):
- Վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում բնամթերային եկամուտը կամ բնամթերքով պահանջի իրավունքը հայտարարագրում արտացոլվում է **եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով**, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար: Այդ նպատակով կարող են կիրառվել առքուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված

տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման ձևավորված նախադեպային տվյալները:

- **«Ընդամենը»** տողի և **«Եկամուտների չափը», «ՀՀ դրամով»**, **«արտարժույթով»** և **«բնամթերքով»** սյունակների հատման համապատասխան վանդակներում նշվում է ստացված եկամուտների տեսակների հանրագումարը:
- «**արտարժույթով**» եկամտի հանրագումարը չի հաշվարկվում:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ հայտարարագիրը ներկայացվում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով՝ ք. Երևան, 0077 Բաղրամյան պողոտա 26 հասցեով:

34. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ Հայտարարագիրը էթիկայի հանձնաժողով է ներկայացվում պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում:

35. Հայտարարագիրը էթիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես փոստային եղանակով, այնպես էլ առձեռն՝ փակ և ստորագրված ծրարով:

36. Հայտարարագիրը փոստային եղանակով էթիկայի հանձնաժողով է ուղարկվում պատվիրված նամակով:

37. Հայտարարագրի փակ ծրարը էթիկայի հանձնաժողով առձեռն ներկայացնող անձը գրանցամատյանում ստորագրությամբ հաստատում է դրա ներկայացման փաստը: Էթիկայի հանձնաժողովի պատասխանատուի կողմից տրամադրվում է ստացական հայտարարագրի փակ ծրարն ընդունելու վերաբերյալ:

38. Հայտարարագրի ներկայացման ժամկետը բարձրաստիճան պաշտոնատար անձանց ռեեստրում գրանցվում է.

- Փոստային առաքումների դեպքում պատվիրված նամակի ուղարկման ամսաթիվ պարունակող կնիքի համաձայն:
- Առձեռն ներկայացման ժամանակ գրանցամատյանում կատարված գրառման և տրված ստացականի ամսաթվով:

39. Հայտարարագրի ներկայացման համար փոստային բաժանմունքի կողմից տրամադրված կտրոնը կամ էթիկայի հանձնաժողովի պատասխանատուի կողմից տրամադրված ստացականը հիմք են հանդիսանում հայտարարագրի ներկայացման ժամկետի որոշման համար:

40. Հայտարարագրերը ներկայացվում են թղթային տարբերակով:

41. Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքում, բարձրաստիճան

պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿ

	ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ	ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ
1.	սահմանադրական դատարանի անդամ	սահմանադրական դատարանի անդամի պաշտոն զբաղեցնող անձինք
2.	նախարարներ և նրանց տեղակալներ	նախարարության համակարգում պաշտոն զբաղեցնող անձինք՝ «**Նախարարության համակարգի պաշտոնները**» ներառում են նախարարի, նախարարի տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարի, օգնականների և ռեֆերենտների, նախարարության աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ պաշտոն զբաղեցնող փոխկապակցված անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում **տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնները**: Տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ցանկը սահմանվում է համապատասխան մարմնի հաստիքացուցակով:

	ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ	ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁ
3.	գլխավոր դատախազ, նրա տեղակալներ, մարզերի, Երևան քաղաքի և կայազորների դատախազներ	դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձինք
4.	կառավարությանն առընթեր պետական մարմինների ղեկավարներ և ղեկավարների տեղակալներ	ՀՀ ԿԱ մարմնում (ներառյալ՝ կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում, ինչպես նաև ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններում) պաշտոն զբաղեցնող անձինք:
5.	օրենքներով ստեղծված կոլեգիալ պետական մարմինների ղեկավարներ և անդամներ	այդ մարմնի ղեկավարի և անդամի պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև այդ մարմնի կողմից կարգավորվող ոլորտում գործող առևտրային կազմակերպություններում ղեկավար պաշտոն զբաղեցնող անձինք: **Առևտրային կազմակերպությունների ղեկավար պաշտոններ** են համարվում առևտրային կազմակերպության գործադիր մարմնի անդամների, ինչպես նաև առևտրային կազմակերպության խորհրդի անդամների պաշտոնները:
6.	դատավորներ	դատախազի, դատավորի, քննիչի պաշտոն զբաղեցնող անձինք

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ
1.	**Հողամաս**
2.	**Ընդերքի մաս**
3.	**Մեկուսի ջրային օբյեկտ**
4.	**Անտառ**
5.	**Բազմամյա տնկի**

	ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿԸ
6.	**Շենքը, շինությունը**, այդ թվում
6.1	**Անհատական բնակելի տունը՝** հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,
6.2	**Բնակարանը՝** բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը,
6.3	**Այգետնակը** (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը
6.4	**Բազմաբնակարան բնակելի շենքը՝** մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի և ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը.
6.5	**Բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը** (բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված և համարակալված տարածքը
6.6	**Ավտոտնակը** (տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը)
6.7	**Հասարակական նշանակության շինությունը** (բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը)
6.8	**Արտադրական նշանակության շինությունը** (արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը)
6.9	**Անավարտ (կիսակառույց) շինությունները** (Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բնութագրվող)
6.10	Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունները, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը և շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:
7.	**Հողին ամրակայված այլ անշարժ գույք**

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ
1.	Ավտոմոբիլային տրանսպորտի միջոց, որի շարժիչի աշխատանքային ծավալը գերազանցում է 50 խոր. սմ-ը, իսկ առավելագույն արագությունը գերազանցում է 50 կմ/ժ-ը, այդ թվում
	ա) **Բեռնատար** (բեռնաուղևորատար) ավտոմոբիլային տրանսպորտի միջոց,
	բ) **Մարդատար** ավտոմոբիլային տրանսպորտի միջոց
2.	Անվավոր մեքենա կամ մեխանիզմ
3.	Թրթուրավոր մեքենա կամ մեխանիզմ
4.	Ինքնագնաց մեքենա կամ մեխանիզմ
5.	Տարբեր բեռնատարողությամբ կցորդ
6.	Տարբեր բեռնատարողությամբ կիսակցորդ
7.	Օդային փոխադրամիջոց
8.	Ջրային փոխադրամիջոց
9.	Ձյունագնաց
10.	Մոտոամենագնաց (քվադրոցիկլը)
11.	Մոտոցիկլետ
12.	Այլ ավտոմոբիլային տրանսպորտային միջոց

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

	ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԸ
1.	Բաժնային արժեթղթեր են համարվում
1.1	Բաժնետոմսը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթուղթը,
1.2	Բաժնետոմսը, 1-ին կետով սահմանված արժեթղթերի վրա հիմնված դեպոզիտար ստացականը (դեպոզիտար ստացական է համարվում օտարերկրյա թողարկողի բաժնետոմսերի, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ փաստաթղթերի, պարտատոմսերի կամ պարտքային այլ արժեթղթերի հիման վրա թողարկված այն արժեթուղթը, որը դրա սեփականատիրոջն իրավունք է տալիս իրականացնել դրա հիմքում ընկած արժեթղթերով ամրագրված

	ԱՐԺԵԹՂԹԻ ԿԱՄ ԱՅԼ ՆԵՐԴՐՄԱՆ ՏԵՍԱԿԸ
	իրավունքները),
1.3	Ցանկացած այլ արժեթուղթ, որն իրավունք է տալիս ձեռք բերել 1-ին կետով սահմանված արժեթղթերը փոխարկման, փոխանակման կամ այլ իրավունքների իրականացման եղանակով և թողարկվել է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված արժեթղթերի թողարկողի կամ նրանց խմբի անդամ թողարկողի կողմից,
1.4	Ներդրումային ֆոնդերի փայերը (բաժնետոմսերը):
2.	Պարտքային արժեթղթեր են համարվում՝
2.1	Պարտատոմսերը,
2.2	«Արժեթղթերի շուկային մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով» սահմանված պարտքային այլ արժեթղթերը, այդ թվում՝ դրամական շուկայի գործիքներ (դրամական շուկայի գործիքները մինչև մեկ տարի մարման ժամկետ ունեցող պարտքային արժեթղթերն են, այդ թվում՝ կարճաժամկետ պարտատոմսերը և այլ կարճաժամկետ պարտքային արժեթղթերը):
3.	Վճարային արժեթղթեր են համարվում չեկը, հասարակ մուրհակը և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով» սահմանված այլ վճարային արժեթղթեր:
4.	Այլ ներդրումները

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ
1.	Աշխատանքի վարձատրություն և/կամ/ դրան հավասարեցված այլ վճարումներ
2.	Գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներ օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (ռոյալթի) և հեղինակային վարձատրությունը.

	ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ
3.	Ստացված փոխառությունները (վարկերը) կամ տրված փոխառությունների (վարկերի) ստացված տոկոսը և այլ հատուցումը.
4.	Շահաբաժիններ
5.	Խաղատներում կամ շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները)
6.	Մրցույթների կամ մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի իրային կամ դրամական շահումները (մրցանակները).
7.	Նվիրատվության կամ օգնության կարգով ստացված գույքը, դրամական միջոցները (բացառությամբ աշխատանքի, ծառայության տեսքով ստացած)
8.	Ապահովագրական հատուցումները
9.	Գույքը (բացառությամբ դրամական միջոցների) օտարելուց ստացված եկամուտը
10.	Վարձակալության դիմաց ստացված վճարը կամ այլ հատուցումը
11.	Քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտը
12.	Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը
13.	Ժառանգության կարգով ստացված գույքը (այդ թվում՝ դրամական միջոցները)
14.	Փոխառություններ (վարկեր)
15.	Միանվագ վճարները
16.	Գույքային իրավունքներից ստացված եկամուտը
17.	Այլ եկամուտները